

**ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ  
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀՀ  
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Գլխավոր տեղեկություն**

Համար	N 137-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Base act (05.03.2016-till now)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2016.02.24/15(1195) Հոդ.135
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	11.02.2016
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	22.02.2016
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	05.03.2016

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

11 փետրվարի 2016 թվականի N 137-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ըստ մաքսային ռեժիմների առանձին ապրանքների տեղափոխումն արգելելու մասին» N 902 որոշման N 4 հավելվածի 1-ին և 5-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի «Բուսաբանական հավաքածուներ և առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու կարգի մասին» N 1173-Ն որոշման N 1 հավելվածի 1-ին կետի երրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կարգով սահմանված դրույթները չեն տարածվում «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիների, դրանց մասերի և ածանցյալների ներմուծման և արտահանման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 7 հավելվածով և որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների արտահանման վրա:»:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի «Վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանելու և Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծելու կարգի մասին» N 1174-Ն որոշման N 1 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետի երկրորդ պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն կարգով սահմանված դրույթները չեն տարածվում «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիների, դրանց մասերի և ածանցյալների ներմուծման և արտահանման, գյուղատնտեսական և արդյունազործական նպատակներով օգտագործման տրամադրված վայրի կենդանիների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 7 հավելվածով և որոշման 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների արտահանման դեպքում:».

2) 4-րդ կետի «ա» ենթակետից հանել «անասնաբուժական կարանտին իրականացնող համապատասխան լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության վկայականը կամ սերտիֆիկատը (պատճեն)» բառերը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի «Օգոնային շերտը քայքայող նյութերի ցանկը հաստատելու և ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու մասին» N 327-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման վերնագրից հանել «ցանկը հաստատելու և» բառերը.

2) որոշման N 2 հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Օգոնային շերտը քայքայող նյութերի՝ Հայաստանի Հանրապետություն ներմուծման թույլատրելի ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման NN 1 և 5 հավելվածներին համապատասխան խմբերի և տարիների:

Խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն չափաքանակը (տոննա/տարի)
Անվանացանկ A-ի խումբ I, II Անվանացանկ B-ի խումբ I, II, III Անվանացանկ C-ի խումբ II, III Անվանացանկ E-ի խումբ I	2011 թ-ից սկսած	0
Անվանացանկ C-ի խումբ I	2011-2012 թթ. 2013-2014 թթ. 2015-2019 թթ. 2020-2024 թթ.	անսահմանափակ 126,69 114,02 82,35

2025-2029 թթ.	41,17
2030-2039 թթ.	3,17
2040թ-ից սկսած	0

»:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունիսի 21-ի «Օգոստյան շերտը քայքայող նյութերի առաքման՝ ներմուծման կամ արտահանման կամ տարանցիկ փոխադրման թույլտվության ձևն ու տրամադրման կարգը հաստատելու մասին» N 771-Ն որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 1.1-ին կետով.

«1.1. Սույն կարգով սահմանված դրույթները չեն տարածվում Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշմամբ սահմանված՝ արտաքին առևտրային նպատակով ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման լիցենզիաների տրամադրման գործընթացների վրա:»:

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 27-ի «Օգոստյան շերտը քայքայող նյութերի հաշվառման կարգը հաստատելու մասին» N 1565-Ն որոշման հավելվածի 5-րդ կետում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) 2-րդ ենթակետը «թույլտվություն» բառից առաջ լրացնել «լիցենզիա կամ» բառերով.

2) 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) օգոստյան շերտը քայքայող նյութերի առաքման՝ ներմուծման կամ արտահանման, կամ տարանցիկ փոխադրման լիցենզիան կամ թույլտվությունը, լիցենզիայի կամ թույլտվության համարը, լիցենզիա կամ թույլտվություն ստացող իրավաբանական կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի տվյալները, թույլատրված օգոստյան շերտը քայքայող նյութի (նյութերի) անվանումն ու քանակությունը, ներմուծման դեպքում՝ արտահանվող երկրի և ներմուծման մաքսային ձևակերպումներն իրականացրած մաքսային մարմնի անվանումն ու ներմուծման ամսաթիվը, արտահանման դեպքում՝ ներմուծող երկրի և արտահանման մաքսային ձևակերպումներն իրականացրած մաքսային մարմնի անվանումն ու ամսաթիվը, տարանցիկ փոխադրման դեպքում՝ մուտքի և ելքի մաքսային մարմինների անվանումներն ու ամսաթվերը.»:

7. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով փոխադրման համար արգելված և սահմանափակումների ենթակա որոշ ապրանքների ցանկերը, ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզիայի և հայտի ձևերը հաստատելու, որոշ ապրանքների արտահանման և ներմուծման լիցենզիաների տրամադրման առանձնահատկությունները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 90-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) 2-րդ կետում՝

ա. 1-ին և 2-րդ ենթակետերը «թափոնների» բառից առաջ լրացնել «վտանգավոր» բառով,

բ. 4-րդ ենթակետում «որոշման 2-րդ կետի 4-6-րդ ենթակետերով» բառերը փոխարինել «որոշման 2-րդ կետի 7-9-րդ ենթակետերով» բառերով,

գ. 8-րդ ենթակետի առաջին պարբերությունը «արտահանման» բառից հետո լրացնել «, ինչպես նաև սույն որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետով սահմանված ապրանքների արտահանման» բառերով,

դ. 8-րդ ենթակետի «ա» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ա. պետական իրավասու մարմնի համաձայնությունը (գրավոր տեսքով), որի տարածք ներմուծվում են վտանգավոր թափոնները և (կամ) որի տարածքով տեղափոխվում են վտանգավոր թափոնները՝ Բազելի կոնվենցիային համապատասխան (վտանգավոր թափոնների արտահանման դեպքում),»:

ե. 8-րդ ենթակետի «գ» պարբերությունը «փոխադրման» բառից առաջ լրացնել «վտանգավոր թափոնների» բառերով, իսկ «արտահանողի» բառից հետո՝ «(ներմուծողի)» բառով,

զ. 8-րդ ենթակետի «դ» պարբերությունը «թափոնների» բառից առաջ լրացնել «վտանգավոր» բառով,

է. 8-րդ ենթակետի «գ» պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«գ. վտանգավոր թափոնների օգտագործման համար տեխնիկական (տեխնոլոգիական) հնարավորությունների առկայության մասին տեղեկատվություն (քաղվածք վտանգավոր թափոնները որպես հումք օգտագործելու հնարավորությունը հաստատող տեխնոլոգիական կանոնակարգից կամ այլ փաստաթուղթ, որը հաստատում է դրանց օգտագործման հնարավորությունն առանց այլ վտանգավոր թափոնների կամ դրանց մնացորդների առաջացման), վտանգավոր թափոնների ներմուծման դեպքում»,

ը. 8-րդ ենթակետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «է» պարբերությամբ.

«է. վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման լիցենզիայի պատճենը:»:

թ. կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8.1-ին, 8.2-րդ և 8.3-րդ ենթակետերով.

«8.1) սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով և 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված բուսական և կենդանական տեսակների արտահանման լիցենզիաների ձևակերպման համար հայտատուն, բացի Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 25-ի N 1524-Ն որոշման N 4 հավելվածի 12-րդ կետով սահմանված փաստաթղթերից և տեղեկություններից, լրացուցիչ լիազոր մարմին է

ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

ա. վայրի բույսի կամ կենդանու ձեռքբերումը հաստատող փաստաթուղթ (հավաք, մթերում, գնում, որս և այլն),

բ. արտաքին առևտրային գործարք իրականացնելու դեպքում արտահանողի և ներմուծողի միջև պայմանագրի, համաձայնագրի պատճենը, դրանց բացակայության դեպքում կողմերի միջև համագործակցության մտադրության վերաբերյալ որևէ այլ փաստաթղթի պատճենը, իսկ մնացած բոլոր դեպքերում ներմուծող երկրի համաձայնությունը կամ թույլտվությունը (պատճենը), եթե այդ երկրի օրենսդրությամբ սահմանված է համապատասխան կարգ.

8.2) եթե սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով և 2-րդ կետի 6-րդ ենթակետով սահմանված բուսական և կենդանական տեսակները միևնույն ժամանակ ընդգրկված են նաև «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայի հավելվածներում, ապա դրանց արտահանման առանձնահատկությունները կարգավորվում են «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիայով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի N 1281-Ն որոշմամբ հաստատված կարգով.

8.3) գիտական կազմակերպությունների, կենդանաբանական և բուսաբանական այգիների կողմից գիտահետազոտական, փոխանակման, գենոֆոնդի համալրման, նվիրատվության նպատակով, ինչպես նաև ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով՝ սույն որոշման 1-ին կետի 7-րդ ենթակետով սահմանված ապրանքատեսակների արտահանման առանձնահատկությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 18-ի N 1173-Ն և N 1174-Ն որոշումներով սահմանված կարգով:».

2) որոշման N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

3) որոշման N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 2 հավելվածի.

4) որոշման N 5 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 3 հավելվածի.

5) որոշման N 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն 4 հավելվածի:

8. Ուժը կորցրած ճանաչել՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու մասին» N 97 որոշումը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» N 874-Ն որոշումը.

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 8-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 8-ի N 97 որոշման մեջ փոփոխություն կատարելու և Հայաստանի Հանրապետության արգելված վտանգավոր թափոնների ցանկը հաստատելու մասին» N 1093-Ն որոշումը:

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության վարչապետ**

**Հ. Աբրահամյան**

2016 թ. փետրվարի 22  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
փետրվարի 11-ի N 137-Ն որոշման

«Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՕՁՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ԶԱՅԶԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴԻՆԵՔ ՊԱՐՈՒՆԱԿՈՂ ԱՐՏԱԴԻՆԵՔԻ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԻՑ ԱՐԳԵԼՎԱԾ Է**

Անվանացանկ A

Արտադրանքի անվանում			Ծածկագիրն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձև	Նյութ	Քիմիական անվանում	
Խումբ I			
CFCl <sub>3</sub>	(ԸՖԱ -11)	Ֆտորոտրիքլորմեթան	2903 77 100 0

CF <sub>2</sub> Cl <sub>2</sub>	(ԹՖԱ -12)	դիֆտորդիքլորմեթան	2903 77 200 0
C <sub>2</sub> F <sub>3</sub> Cl <sub>3</sub>	(ԹՖԱ -113)	1,1,2-տրիֆտորտրիքլորեթան	2903 77 300 0
C <sub>2</sub> F <sub>4</sub> Cl <sub>2</sub>	(ԹՖԱ -114)	1,1,2,2-տետրաֆտորդիքլորեթան	2903 77 400 0
C <sub>2</sub> F <sub>5</sub> Cl	(ԹՖԱ -115)	պենտաֆտորքլորեթան	2903 77 500 0
<b>Խումբ II</b>			
CF <sub>2</sub> BrCl	(Հալոն 1211)	դիֆտորքլորբրոմեթան	2903 76 100 0
CF <sub>3</sub> Br	(Հալոն 1301)	տրիֆտորբրոմեթան	2903 76 200 0
C <sub>2</sub> F <sub>4</sub> Br <sub>2</sub>	(Հալոն 2402)	1,1,2,2-տետրաֆտորդիբրոմեթան	2903 76 900 0

**Անվանացանկ B**

Արտադրանքի անվանում			Ճածկագիրն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձև	Նյութ	Քիմիական անվանում	
<b>Խումբ I</b>			
CF <sub>3</sub> Cl	(ԹՖԱ -13)	տրիֆտորքլորմեթան	2903 77 900 0
C <sub>2</sub> FCl <sub>5</sub>	(ԹՖԱ -111)	ֆտորպենտաքլորեթան	2903 77 900 0
C <sub>2</sub> F <sub>2</sub> Cl <sub>4</sub>	(ԹՖԱ -112)	դիֆտորտետրաքլորեթաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> FCl <sub>7</sub>	(ԹՖԱ -211)	ֆտորհեպտաքլորպրոպաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> F <sub>2</sub> Cl <sub>6</sub>	(ԹՖԱ -212)	դիֆտորհեքսաքլորպրոպաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> F <sub>3</sub> Cl <sub>5</sub>	(ԹՖԱ -213)	տրիֆտորպենտաքլորպրոպաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> F <sub>4</sub> Cl <sub>4</sub>	(ԹՖԱ -214)	տետրաֆտորտետրաքլորպրոպաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> F <sub>5</sub> Cl <sub>3</sub>	(ԹՖԱ -215)	պենտաֆտորտրիքլորպրոպաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> F <sub>6</sub> Cl <sub>2</sub>	(ԹՖԱ -216)	հեքսաֆտորդիքլորպրոպաններ	2903 77 900 0
C <sub>3</sub> F <sub>7</sub> Cl	(ԹՖԱ -217)	հեպտաֆտորքլորպրոպաններ	2903 77 900 0
<b>Խումբ II</b>			
CCl <sub>4</sub>		տետրաքլորածխածին (ԹԹԱ) կամ տետրաքլորմեթան	2903 14 000 0
<b>Խումբ III</b>			
C <sub>2</sub> H <sub>3</sub> Cl <sub>3</sub>		մեթիլքլորոֆորմ (ՄԹՖ), այսինքն 1,1,1-տրիքլորեթան	2903 19 100 0

**Անվանացանկ C**

Արտադրանքի անվանում			Ճածկագիրն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձև	Նյութ	Քիմիական անվանում	
<b>Խումբ II</b>			
CH <sub>2</sub> FBr <sub>2</sub>	(ՀԲՖԱ -21B2)	ֆտորդիբրոմմեթան	2903 79 210 0-ից
CHF <sub>2</sub> Br	(ՀԲՖԱ -22B1)	դիֆտորբրոմմեթան	2903 79 210 0-ից
CH <sub>2</sub> FBr	(ՀԲՖԱ -31B1)	ֆտորբրոմմեթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> HFBr <sub>4</sub>	(ՀԲՖԱ -21B4)	ֆտորտետրաբրոմմեթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> HF <sub>2</sub> Br <sub>3</sub>	(ՀԲՖԱ -23B3)	դիֆտորտրիբրոմմեթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> HF <sub>3</sub> Br <sub>2</sub>	(ՀԲՖԱ -23B2)	տրիֆտորդիբրոմմեթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> HF <sub>4</sub> Br	(ՀԲՖԱ -24B1)	տետրաֆտորբրոմմեթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> H <sub>2</sub> FBr <sub>3</sub>	(ՀԲՖԱ -31B3)	ֆտորտրիբրոմմեթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> H <sub>2</sub> F <sub>2</sub> Br <sub>2</sub>	(ՀԲՖԱ -32B2)	դիֆտորդիբրոմմեթան	2903 79 210 0-ից

C <sub>2</sub> H <sub>2</sub> F <sub>3</sub> Br	(ՀԲՖԱ -33B1)	տրիֆտորբրոմէթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> H <sub>3</sub> FBr <sub>2</sub>	(ՀԲՖԱ -41B2)	ֆտորդիբրոմէթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> H <sub>3</sub> F <sub>2</sub> Br	(ՀԲՖԱ -42B1)	դիֆտորբրոմէթան	2903 79 210 0-ից
C <sub>2</sub> H <sub>4</sub> FBr	(ՀԲՖԱ -51B1)	ֆտորբրոմէթան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> HFBr <sub>6</sub>	(ՀԲՖԱ -21B6)	ֆտորհեքսաբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> HF <sub>2</sub> Br <sub>5</sub>	(ՀԲՖԱ -22B5)	դիֆտորպենտաբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> HF <sub>3</sub> Br <sub>4</sub>	(ՀԲՖԱ -23B4)	տրիֆտորտետրաբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> HF <sub>4</sub> Br <sub>3</sub>	(ՀԲՖԱ -24B3)	տետրաֆտորտրիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> HF <sub>5</sub> Br <sub>2</sub>	(ՀԲՖԱ -25B2)	պենտաֆտորդիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> HF <sub>6</sub> Br	(ՀԲՖԱ -26B1)	հեքսաֆտորբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> FBr <sub>5</sub>	(ՀԲՖԱ -31B5)	ֆտորպենտաբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>2</sub> Br <sub>4</sub>	(ՀԲՖԱ -32B4)	դիֆտորտետրաբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>3</sub> Br <sub>3</sub>	(ՀԲՖԱ -33B3)	տրիֆտորտրիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>4</sub> Br <sub>2</sub>	(ՀԲՖԱ -34B2)	տետրաֆտորդիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>5</sub> Br	(ՀԲՖԱ -35B1)	պենտաֆտորբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> FBr <sub>4</sub>	(ՀԲՖԱ -41B4)	ֆտորտետրաբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> F <sub>2</sub> Br <sub>3</sub>	(ՀԲՖԱ -42B3)	դիֆտորտրիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> F <sub>3</sub> Br <sub>2</sub>	(ՀԲՖԱ -43B2)	տրիֆտորդիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> F <sub>4</sub> Br	(ՀԲՖԱ -44B1)	տետրաֆտորբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>4</sub> FBr <sub>3</sub>	(ՀԲՖԱ -51B3)	ֆտորտրիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>4</sub> F <sub>2</sub> Br <sub>2</sub>	(ՀԲՖԱ -52B2)	դիֆտորդիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>4</sub> F <sub>3</sub> Br	(ՀԲՖԱ -53B1)	տրիֆտորբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>5</sub> FBr <sub>2</sub>	(ՀԲՖԱ -61B2)	ֆտորդիբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>5</sub> F <sub>2</sub> Br	(ՀԲՖԱ -62B1)	դիֆտորբրոմպրոպան	2903 79 210 0-ից
C <sub>3</sub> H <sub>6</sub> FBr	(ՀԲՖԱ -71B1)	ֆտորբրոմպրոպան	2903 79 210 0-ից
Խումբ III			
CH <sub>2</sub> BrCl		բրոմքլորմեթան	2903 79 900 0-ից

Անվանացանկ E

Արտադրանքի անվանում		Ճածկագիրն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձև	Անվանում	
Խումբ I		
CH <sub>3</sub> Br	մեթիլբրոմիդ	2903 39 110 0

Անվանացանկ D

Արտադրանքի անվանումը	Ճածկագիրն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
1. Սառնագենտ խառնուրդներ	3824 71 000 0-ից 3824 72 000 0-ից 3824 74 000 0-ից - 3824 79 000 0-ը
2. Օդորակիչներ և ջերմային պոմպեր	8415 10 8415 81 00 8415 82 000 8418 61 00 8418 69 000-ից
3. Սառնարաններ	8418 10 200 8418 10 800 8418 50-ից 8418 69 000-ից
4. Սառույց արտադրող սարքավորումներ, կաթի սառեցման	8418-ից

իամակարգեր	8419-ից
5. Սառցեխցիկներ	8418 10 200 8418 10 800 8418 30 200 8418 30 800 8418 40 200 8418 40 800 8418 50-ից 8418 69 000-ից
6. Օդի չորացուցիչներ	8418 69 000-ից 8479 89 970 1-ից 8479 89 970 8-ից
7. Փրփրացված ջերմամեկուսիչ սալիկներ, վահանակներ, խողովակների ծածկույթներ, որոնց արտադրության ժամանակ որպես փրփրացնող գոլորշիչներ են օգտագործվել օզոնային շերտը քայքայող տարրեր պարունակող նյութեր	3921 11 000 0-ից - 3921 19 000 0-ը
8. Պոլիէթերային (պոլիոլային) կոմպոնենտներ, միացություններ փրփրացված պոլիուրեթանի արտադրության համար (կոմպոնենտ A)	3907 20 200 1-ից 3907 20 200 9-ից
9. Շարժական կրակմարիչներ	8424 10 000 0-ից

1. Սույն ցանկի օգտագործման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրերով, այնպես էլ արտադրանքի (նյութի) (առևտրային և քիմիական հատկանիշներով) անվանումով:

2. Անվանացանկ A, B, C (Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման NN 1 և 5 հավելվածներում ընդգրկված անվանացանկերում), E-ում ներառված օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը և (կամ) արտահանումը հնարավոր է բացառապես հետևյալ դեպքում՝ եթե իրականացվում է դրանց տարանցիկ փոխադրումը ԵՏՄ-ի մաքսային տարածքով 1987 թվականի սեպտեմբերի 16-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության կողմ հանդիսացող մի երկրից մյուս երկիր:

3. Անվանացանկ B-ի III խմբի  $C_2H_3Cl_3$  բանաձևը չի վերաբերում 1,1,2-տրիքլորէթանին:

4. Անվանացանկ D-ում ներառված արտադրանքի ներմուծումը և (կամ) արտահանումն արգելված են՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

1) եթե իրականացվում է դրանց տարանցիկ փոխադրումը ԵՏՄ-ի մաքսային տարածքով 1987 թվականի սեպտեմբերի 16-ի «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրության կողմ հանդիսացող մի երկրից մյուս երկիր:

2) անվանացանկ A-ի հումք II-ի նյութեր պարունակող շարժական կրակմարիչների:

3) արտահանման վերահսկողության համակարգով կարգավորման ենթակա արտադրանքի:»:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
փետրվարի 11-ի N 137-Ն որոշման

«Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ՏԱՐԱԾՔ ԿԱՄ ՈՐՈՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԱՅԼ  
ԵՐԿՐՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է**

Ապրանքի անվանումը	Ծածկագիրը՝ ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ	Թափոնի տեսակի ծածկագիրը՝ ըստ «Վտանգավոր թափոնների երկրից երկիր
-------------------	---------------------------------	---

		տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի դասակարգման	
		A և B թափոնների միացյալ ցանկը	Y կարգավորող թափոնների հիմնական ցանկը
1. Թափոններ, որոնց կազմում որպես բաղադրիչ մաս կամ որպես աղտոտիչ մտնում են հետևյալ նյութերից ցանկացածը	2805 40-ից 7204-ից 7404 00-ից	A1030	
մկնդեղ, մկնդեղի միացություններ	7503 00-ից		Y24
սնդիկ, սնդիկի միացություններ (բացառությամբ սնդիկային լամպերի, լյումինեսցենտային փողերի)	7602 00-ից 7802 00 000 0-ից		Y29
	7902 00 000 0-ից 8002 00 000 0-ից 8101 97 000 0-ից 8102 97 000 0-ից 8103 30 000 0-ից 8104 20 000 0-ից 8105 30 000 0-ից 8106 00 100 0-ից 8107 30 000 0-ից 8108 30 000 0-ից 8109 30 000 0-ից 8110 20 000 0-ից 8111 00 190 0-ից 8112 13 000 0-ից 8112 22 000 0-ից		
	8112 52 000 0-ից 8112 92 100 0-ից 8112 92 210 1-ից 8112 92 210 9-ից 8113 00 400 0-ից		
2. Մազնեզիումի փոշի	8104 20 000 0-ից 8104 30 000 0-ից 8104 90 000 0-ից		
3. Ապակու և մետալուրգիական արտադրության փոշի, որը պարունակում է բերիլիում և դրա	2620 91 000 0-ից		Y20

միացությունները			
4. Կապար և դրա միացությունները պարունակող փոշի	2620 29 000 0-ից		Y31
5. Վանադիումի միացություններ պարունակող փոշի	2620 99 950 9-ից		
6. Գալվանական ստվածքներ	2620-ից 2837-ից	A1050	Y17, Y7, Y21, Y22, Y23, Y26, Y33
7. Խարամ, մոխիր և մնացորդներ (բացի սև մետաղների արտադրության թափոններից), որոնք պարունակում են մետաղներ, արսեն կամ դրանց միացությունները, այդ թվում՝	2620-ից		
1) մետաղական մնացորդներ և մնացորդներ, որոնք բաղկացած են թվարկված նյութերից ցանկացածի համահավասարներից՝		A1010	Y20, Y24, Y29, Y31
արսեն, բերիլիում, կապար, սնդիկ			
մանգանի շլամներ՝ մանգանի երկօքսիդի էլեկտրոլիտիկ արտադրությունից			
պղնձի արտադրության արսենային սորախցուկ		A1030	Y24
անագի արտադրության արսենակալիումային սորախցուկ		A1030	Y24
կապարի արտադրության արսենակալցիումային սորախցուկ		A1030	Y24
սելենասնդիկային շլամ՝ ծծմբական թթվի արտադրությունից			Y25, Y29
կապարի, նիկելի, կադմիումի հիդրօքսիդների շլամ			Y31, Y26
քլորային այրումիսի թափոններ՝ ացետոֆենոնի խառնուկով			Y15
շլամ (մոխրաջուր), փոշի և նստվածքներ՝ ցինկի մշակումից հետո		A1070	
մոխիր՝ մեկուսացված պղնձալարի այրումից		A1090	
մետաղների խածատման բանեցված լուծույթներ, հիդրավլիկ հեղուկներ, արգելակման հեղուկներ և հակասառիչներ	3825 50 000 0-ից	A1060	Y17
ցինկային մնացորդներ, որոնք պարունակում են կապար և կադմիում	7902 00 000 0-ից	A1080	Y26 Y31
պղնձի մաքրման և անջատման էլեկտրոլիտիկ պրոցեսներից առաջացած էլեկտրոլիտի բանեցված լուծույթներ	3825 69 000 0-ից	A1110	Y34 Y35
պղնձ պարունակող խածատման բանեցված լուծույթներ	3825 50 000 0-ից	A1130	Y22
չմասնատված տեսքով բանեցված կապարաթթվային էլեկտրակուտակիչներ	8548 10-ից	A1160	Y31
կատոդաճառագայթային խողովակների ապակու թափոններ և ակտիվ ծածկ ունեցող ապակու թափոնների այլ տեսակներ	7001 00 100 0-ից	A2010	
մանրաթելի և փոշու տեսքով ասբեստի թափոններ	2524-ից 6812-ից	A2050	Y36
ասբեստ պարունակող բանեցված իրեր ասբոցեմենտից, թաղանթանյութի կամ համանման	6811 40 000-ից		

Ապագա բնութագրի ցանկում, որոնք իրենց ֆիզիկաքիմիական բնութագրով համապատասխանում են ասբեստին	7019-ից		
օգտագործված սևդիկային լամպեր և լյումինեսցենստային փողեր	8539-ից 8540-ից		Y29
ավելի քան 50%-ով բանեցված սորբենտներ՝ արսինի կամ ֆոսֆինի խառնուրդով	3802-ից 2818-ից 3824-ից 2842-ից		Y24
թափոնների այրման սարքավորումներից առաջացած խարամ և մոխիր (ներառյալ թռչող մոխիր և փոշի)	2621-ից		Y18
պիրոլիզի սարքավորումների խարամ և մոխիր	2621-ից		Y11
2) նավթային կոքսի և բիթումի արտադրության կամ վերամշակման թափոններ (բացառությամբ պիրոլիզային խեժի), այդ թվում՝	2713 90-ից 3825-ից	A3010, A3030, A3190	Y11, Y39
թթվային խեժ, թթվային խայծղան յուղերի մաքրումից առաջացած թթվային գուդրոն, որը պարունակում է ծծմբական թթու, խեժացած սուլֆացված միացություններ			Y11
սուլֆոնատային հավելանյութերի արտադրությունից առաջացած թթվային գուդրոն, որը պարունակում է ծծմբական թթու, ծանր օրգանական սուլֆոնատներ			Y11
արոմատիկ ածխաջրածինների մաքրումից առաջացած թթվային գուդրոն, որը պարունակում է ծծմբական թթու, արոմատիկ միացություններ, սուլֆաթթուներ			Y11
պարաֆինների մաքրումից առաջացած թթվային գուդրոն, որը պարունակում է ծծմբական թթու, օրգանական միացություններ			Y11
կոքսաքիմիական արտադրության բենզոլի բազմաթորման արտադրամասի սուլֆատային բաժանմունքի թթվային խեժ			Y11
թթվային խեժերի վերամշակումից առաջացած մնացորդներ			Y11
կոքսային և գազային գործարանների շլամներ			Y39
3) բանեցված նավթամթերք, այդ թվում՝			
Էթիլացված բենզինի շլամներ և Էթիլացված հակաճայթյունային խառնուրդի շլամներ	2620 21 000 0-ից 2710-ից 3811 11-ից	A3030	Y31
Կապարային հակաճայթյունային հավելանյութեր պարունակող թափոններ	2710-ից 3811 11-ից	A3030	
8. Մորթու կամ կաշվի հումքի թափոններ, որոնք պարունակում են մարդու և կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչներ	0511 99 100 0-ից 4101 - 4103-ից 4301-ից 4115 20 000 0-ից	A3110	Y21 Y4
9. Թափոններ. ոռոնս	3101 00 000	A3130	Y37

պարունակում են օրգանական ֆոսֆորային միացություններ	0-ից 3825 61 000 0-ից		
10. Ֆտորօրգանական միացությունների թափոններ	2903-ից 3825 61 000 0-ից		Y45
11. Քլորօրգանական թթվի արտադրության թափոններ	2915-ից 2916-ից 2917-ից 2918-ից		Y45
12. Չհալոգենացված օրգանական լուծիչների և դրանց խառնուրդների թափոններ	3825 61 000 0-ից 3825-ից	A3140	Y42
13. Հալոգենացված օրգանական լուծիչների և դրանց խառնուրդների թափոններ	3825 41 000 0-ից	A3150	Y41
14. Պոլիքլորացված դիֆենիլներ (ՊՔԴ), պոլիքլորացված տերֆենիլներ (ՊՔՏ), պոլիքլորացված նաֆթալիններ (ՊՔՆ) կամ պոլիբրոմացված դիֆենիլներ (ՊԲԴ)՝ ներառյալ ցանկացած այլ պոլիբրոմացված 50 մգ/կգ և ավելի կոնցենտրացիա ունեցող համանման միացություններ պարունակող կամ դրանցով աղտոտված իրերի և նյութերի թափոններ	3825-ից	A3180	Y10
15. Թափոններ՝ խեժանման լստվածքի տեսքով (բացի ասֆալտային կապակցանյութերից), որը գոյանում է օրգանական նյութերի մաքրագտման, թորման կամ ցանկացած պիրոլիտիկ մշակման արդյունքում	3825-ից	A3190	Y11
16. Խեժանման լստվածքներ (թերթաքարերի վերամշակման թափոններ)՝ ֆենոլ պարունակող	2706 00 000 0-ից		
17. Ռետինե թափոններ հետևյալ նյութերից, եթե դրանք խառնված չեն այլ թափոններին, այդ թվում՝		B3040	
1) մաշված օդախցիկներ	4013-ից	B3140	
2) պինդ ռետինի թափոններ (օրինակ՝ էրնիտ)	4017 00 000 9-ից	B3040	
18. Օդաճնշական անվադողեր և դողածածկեր՝ օգտագործված (բացառությամբ քաղաքացիական օդանավերի օգտագործված օդաճնշական անվադողերի և դողածածկերի, արտահանման դեպքում)	4012 20 000 1 4012 20 000 9	B3040 B3140	
19. Թափոններ, որոնք պարունակում են կամ աղտոտված են ստորև նշված նյութերով		A4110	
1) պոլիքլորացված դիբենզոֆուրանի ցանկացած անալոգ	3825-ից		Y43
2) պոլիքլորացված դիբենզոդիօքսիլի ցանկացած անալոգ	3825-ից		Y44
20. Պոլիքլորացված կամ պոլիբրոմացված դիֆենիլներ պարունակող նյութերով աղտոտված փաթեթավորման		A4130	

տարաների և կոնտեյներների թափոններ			
1) պլաստմասսաներից	3915-ից 3923-ից		
2) փայտից	4401 39-ից 4415-ից		
3) թղթից և ստվարաթղթից	4707-ից 4819-ից		
4) ապակուց՝ բացառությամբ ապակյա շարդոնի	7010-ից		
5) սև մետաղներից	7204-ից		
21. Քիմիական տեքստիլ նյութերից հատակի ծածկույթների թափոններ	5701 90-ից 5702 32-ից 5702 42-ից 5702 50 310 0-ից 5702 50 390 0-ից 5702 92 100 0-ից 5702 92 900 0-ից 5703 20-ից 5703 30-ից 5705 00 300 0-ից		
22. Դեղագործական արտադրանքի արտադրության, պատրաստման և օգտագործման թափոններ՝ ներառյալ պիտանիության ժամկետը լրացած դեղամիջոցները (արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված նյութ), այդ թվում՝ կենդանիների բուժման համար նախատեսված	2106 90 980 3-ից 2901 - 2942 00 000 0-ից 3006 92 000 0-ից 3824 90 610 0-ից	A4010	Y2 Y3
23. Կլինիկական և դրա հետ կապված թափոններ (բժշկական, անասնաբուժական կամ այլ համանման գործունեության թափոններ. թափոններ, որոնք գոյանում են հիվանդանոցներում կամ այլ հաստատություններում պացիենտների հետազոտության, բուժման կամ գիտահետազոտական աշխատանքների ժամանակ)	3825 30 000 0-ից	A4020	Y1 Y3
24. Բիոցիդների և ֆիտոդեղագործական պատրաստուկների արտադրության և կիրառման թափոններ՝ ներառյալ ստանդարտին չհամապատասխանող պեստիցիդներ և հերբիցիդներ՝ պիտանիության ժամկետը լրացած (արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված նյութ) կամ նախնական օգտագործման համար ոչ պիտանի	3808-ից 3825 61 000 0-ից	A4030	Y4
25. Բույսերի մշակման և վնասատուներից պաշտպանության միջոցների արտադրության թափոններ	3825 61 000 0-ից		Y45
26. Փայտանյութի քիմիական կոնսերվանտների արտադրության		A4040	Y5

և կիրառման թափոններ (ընդգրկված չէ կոնսերվանտներով մշակված փայտանյութը) (բացառությամբ սնդիկի միացությունների)			
1) կրեոզոտային յուղ	2707 91 000 0		
2) բիթումային մածուկներ	2713 20 000 0		
3) ֆտորական նատրիում	2826 19 100 0-ից		
4) սիլիկոֆտորական նատրիում	2826 90 800 0-ից		
5) պղնձարջասպ	2833 25 000 0		
6) նատրիումի դինիտրոֆենոլատ	2908 99-ից		
7) անտրացենային յուղ	2707 99		
8) փայտակոճերի տոգորման թերթաքարային յուղ	2714 90 000 0-ից		
27. Թափոններ, որոնք բաղկացած են ստանդարտին չհամապատասխանող, պիտանիության ժամկետը լրացած քիմիական նյութերից (արտադրողի կողմից սահմանված ժամկետի ընթացքում չօգտագործված նյութ) (ռեագենտներ) կամ պարունակում են այդպիսի նյութեր	28 խմբից 29 խմբից 3825-ից	A4140	
28. Քիմիական նյութերի թափոններ, որոնք հետազոտությունների կամ ուսումնական գործունեության արդյունք են և որոնց բնույթը դեռևս պարզաբանված չէ, և (կամ) որոնք նոր են ու մարդու առողջության և (կամ) շրջակա միջավայրի վրա դրանց ազդեցությունը հայտնի չէ	28 խմբից 29 խմբից 3825-ից	A4150	Y14

1. Սույն ցանկի կիրառման նպատակով անհրաժեշտ է ղեկավարվել ինչպես ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանումով (ֆիզիկական և քիմիական բնութագրերով):

2. Սույն ցանկն օգտագործվում է նաև Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանի մուտքի մաքսակետից մինչև ելքի մաքսակետ վտանգավոր թափոնների տարանցիկ փոխադրումների դեպքում:

3. Սույն ցանկում նշված վտանգավոր թափոնների Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքից արտահանման դեպքում կիրառվում են ընթացակարգերը, որոնք նախատեսված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 90-Ն որոշման N 6 հավելվածի ցանկում նշված վտանգավոր թափոնների արտահանման և ներմուծման համար:»:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
փետրվարի 11-ի N 137-Ն որոշման

«Հավելված N 5  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՕՉՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԸ ԶԱՅՔԱՅՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ, ՈՐՈՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ Ե ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ  
ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵՊՈՒՄ**

Արտադրանքի անվանում			Ծածկագիրն ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի
Քիմիական բանաձև	Նյութ	Քիմիական անվանում	
Խումբ I			
CHFCI <sub>2</sub>	(ՀՔՖԱ-21)	ֆտորդիքլորմեթան	2903 79 110 0-ից
CHF <sub>2</sub> Cl	(ՀՔՖԱ-22)	դիֆտորքլորմեթան	2903 71 000 0-ից
CH <sub>2</sub> FCI	(ՀՔՖԱ-31)	ֆտորքլորմեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> HFCl <sub>4</sub>	(ՀՔՖԱ- 121)	ֆտորտետրաքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> HF <sub>2</sub> Cl <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 122)	դիֆտորտրիքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> HF <sub>3</sub> Cl <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 123a)	տրիֆտորդիքլորեթան	2903 79 110 0-ից
CHCl <sub>2</sub> CF <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 123)	տրիֆտորդիքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> HF <sub>4</sub> Cl	(ՀՔՖԱ- 124a)	տետրաֆտորքլորեթան	2903 79 110 0-ից
CHFClCF <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 124)	տետրաֆտորքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> H <sub>2</sub> FCI <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 131)	ֆտորտրիքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> H <sub>2</sub> F <sub>2</sub> Cl <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 132)	դիֆտորդիքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> H <sub>2</sub> F <sub>3</sub> Cl	(ՀՔՖԱ- 133)	տրիֆտորքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>2</sub> H <sub>3</sub> FCI <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 141)	1-ֆտոր-2,2-դիքլորեթան	2903 73 000 0-ից
CH <sub>3</sub> CFCl <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 141b)	1,1,1- ֆտորդիքլորեթան	2903 73 000 0-ից
C <sub>2</sub> H <sub>3</sub> F <sub>2</sub> Cl	(ՀՔՖԱ- 142)	1-քլոր, 2,2- դիքլորեթան	2903 74 000 0-ից
CH <sub>3</sub> CF <sub>2</sub> Cl	(ՀՔՖԱ- 142b)	1,1,1- դիֆտորքլորեթան	2903 74 000 0-ից
C <sub>2</sub> H <sub>4</sub> FCI	(ՀՔՖԱ- 151)	ֆտորքլորեթան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> HFCl <sub>6</sub>	(ՀՔՖԱ- 221)	ֆտորհեքսաքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> HF <sub>2</sub> Cl <sub>5</sub>	(ՀՔՖԱ- 222)	դիֆտորպենտաքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> HF <sub>3</sub> Cl <sub>4</sub>	(ՀՔՖԱ- 223)	տրիֆտորտետրաքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> HF <sub>4</sub> Cl <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 224)	տետրաֆտորտրիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> HF <sub>5</sub> Cl <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 225)	պենտաֆտորդիքլորպրոպան	2903 75 000 0-ից
CF <sub>3</sub> CF <sub>2</sub> CHCl <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 225ca)	1-տրիֆտոր, 2-դիֆտոր, 3-դիքլորպրոպան	2903 75 000 0-ից
CF <sub>2</sub> ClCF <sub>2</sub> CHClF	(ՀՔՖԱ- 225tb)	1,1-դիֆտորքլոր, 2-դիֆտոր, 3-դիքլորպրոպան	2903 75 000 0-ից
C <sub>3</sub> HF <sub>6</sub> Cl	(ՀՔՖԱ- 226)	հեքսաֆտորքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> FCI <sub>5</sub>	(ՀՔՖԱ- 231)	ֆտորպենտաքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>2</sub> Cl <sub>4</sub>	(ՀՔՖԱ- 232)	դիֆտորտետրաքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>3</sub> Cl <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 233)	տրիֆտորտրիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>4</sub> Cl <sub>2</sub>	(ՀՔՖԱ- 234)	տետրաֆտորդիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>2</sub> F <sub>5</sub> Cl	(ՀՔՖԱ- 235)	պենտաֆտորքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> FCI <sub>4</sub>	(ՀՔՖԱ- 241)	ֆտորտետրաքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> F <sub>3</sub> Cl <sub>3</sub>	(ՀՔՖԱ- 241)	դիֆտորտրիքլորպրոպան	2903 79 110 0-ից

	242)		
C <sub>3</sub> H <sub>3</sub> F <sub>3</sub> Cl <sub>2</sub>	(ՀՔՖԱ-243)	տրիֆտորդիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>3</sub> F <sub>4</sub> Cl	(ՀՔՖԱ-244)	տետրաֆտորքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>4</sub> FCI <sub>3</sub>	(ՀՔՖԱ-251)	ֆտորտրիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>4</sub> F <sub>2</sub> Cl <sub>2</sub>	(ՀՔՖԱ-252)	դիֆտորդիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>4</sub> F <sub>3</sub> Cl	(ՀՔՖԱ-253)	տրիֆտորքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>5</sub> FCI <sub>2</sub>	(ՀՔՖԱ-261)	ֆտորդիքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>5</sub> F <sub>2</sub> Cl	(ՀՔՖԱ-262)	դիֆտորքլորպրոպան	2903 79 110 0-ից
C <sub>3</sub> H <sub>6</sub> FCI	(ՀՔՖԱ-271)	ֆտորքլորպրոպան	290379 110 0-ից 2904

1. Սույն ցանկի օգտագործման նպատակով անհրաժեշտ է առաջնորդվել ինչպես ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրերով, այնպես էլ արտադրանքի (սյուրթի) (առևտրային և քիմիական հատկանիշներով) անվանումով:
2. Սույն ցանկը չի տարածվում տարանցիկ փոխադրումների վրա:»:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարույունյան**

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2016 թվականի  
փետրվարի 11-ի N 137-Ն որոշման

«Հավելված N 6  
ՀՀ կառավարության 2015 թվականի  
փետրվարի 5-ի N 90-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ, ՈՐՈՆՑ ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԻՎԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ Ե ԱՐՏԱՀԱՆՄԱՆ ԵՎ (ԿԱՄ) ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԴԵԴՔՈՒՄ**

Ապրանքի անվանումը	Ծածկագիրը՝ ըստ ԵՏՄ ԱՏԳ ԱԱ	Թափոնի տեսակի ծածկագիրը՝ ըստ «Վտանգավոր թափոնների երկրից երկիր տեղափոխման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» Բազելի կոնվենցիայի դասակարգման	
		A և B թափոնների միացյալ ցանկը	A և B թափոնների միացյալ ցանկը
1. Խարամ հատիկավորված (խարամավազ), որն ստացվում է սև մետաղների արտադրության ընթացքում	2618 00 000 0	B1200	
2. Խարամ, դրոս (բացի հատիկավորված խարամից), հրաթեփ և սև մետաղների արտադրության այլ թափոններ	2619 00	B1210, B1230	
3. Պղնձի օքսիդ պարունակող հրաթեփ	2620 30 000 0-ից	B1240	Y22
4. Խարամ, մոխիր և մնացորդներ (բացի սև մետաղների արտադրության թափոններից), որոնք պարունակում են մետաղներ,	2620		

արսեն կամ դրանց միացությունները, այդ թվում՝ գարտոցինկ	2620 11 000 0		
կապարի ստացք, կապարի այրուք, կապարի խարամ՝ կապարի 30% և ավելի պարունակությամբ	2620 21 000 0 -ից 2620 29 000 0-ից		Y31
այլումինի խարամ	2620 40 000 0-ից	B1100	
մագնեզիում պարունակող աղային խարամներ	2620 99 950 9-ից		
մագնեզիում պարունակող թեթև մետաղի ստացքեր	2620 99 950 9-ից		
բանեցված կատալիզատորներ, որոնք պիտանի են միայն մետաղի կորզման կամ քիմիական ռեագենտների արտադրության համար	2620-ից	A1140, A2030	
5. Թափոններ, որոնք որպես բաղադրիչ կամ աղտոտիչ պարունակում են ստորև նշված նյութերից ցանկացածը՝ մետաղների կարբոնիլներ	2620-ից 3825-ից		Y19
վեցավալենտ քրոմի միացություններ	2620 91 000 0-ից 3825-ից		Y21
6. Պղնձածուլական գործարանների գազային մաքրող սարքավորումների փոշի և մնացորդներ	2620 30 000 0-ից	A1110	
7. Թափոններ շլամի տեսքով՝ բացառությամբ անոդային շլամի՝ պղնձի էլեկտրոլիտիկ անջատման և մաքրման պրոցեսներից	2620 30 000 0-ից	A1120	Y22
8. Պղնձի քլորիդ կամ պղնձի ցիանիդ պարունակող թափոններ	2620 30 000 0-ից 3825-ից	A1140	Y22, Y33
9. Թուջի և պողպատի արտադրության ընթացքում գոյացող խարամ, որը հետագայում օգտագործվում է որպես հումք՝ տիտանային սպունգի և վանադիումի ստացման համար	2619 00 900 0-ից	B1210	
10. Թանկարժեք մետաղ (մետաղներ) կամ թանկարժեք մետաղի (մետաղների) միացություններ պարունակող մոխիր՝ տպատախտակների այրումից գոյացած	7112 30 000 0-ից	A1150	Y18
11. Թանկարժեք մետաղ (մետաղներ) կամ թանկարժեք մետաղի (մետաղների) միացություններ պարունակող մոխիր՝ ֆոտոժապավենի այրումից գոյացած	7112 30 000 0-ից	B1170	Y18
12. Ֆոտոժապավենի թափոններ, որոնք պարունակում են արծաթի հալոիդներ և (կամ) մետաղական արծաթ	7112 99 000 0-ից	B1180	
13. Ֆոտոթղթի թափոններ, որոնք պարունակում են արծաթի հալոիդներ և (կամ) մետաղական արծաթ	7112 99 000 0-ից	B1190	
14. Քիմիական արդյունաբերական	2520 10 000 0-ից 3825-ից	A2040	

պրոցեսների ընթացքում գոյացող գիպսի թափոններ			
15. Նիտրոցելյուլոզի թափոններ	3912 20-ից	A3060	
16. Ֆենոլների և ֆենոլային միացությունների թափոններ՝ ներառյալ քլորֆենոլը՝ հեղուկների կամ շլամների տեսքով	2907-ից 2908-ից	A3070	Y39
17. Հալոգենացված կամ չհալոգենացված ոչ ջրային թորման մնացորդներ, որոնք գոյանում են օրգանական լուծիչների վերականգնման (ռեգեներացիայի) ժամանակ	3825 41 000 0-ից 3825 49 000 0-ից	A3160	Y6
18. Ալիֆատիկ հալոգենացված ածխաջրածինների (քլորմեթան, դիքլորմեթան, ալիլքլորիդ, էպիքլորհիդրին) արտադրության ժամանակ գոյացող թափոններ՝ 80-90%-ով բաղկացած պոլիքլորացված ածխաջրածինների խառնուրդից	3825 61 000 0-ից	A3170	Y6, Y45
19. Թափոններ, որոնք պարունակում են ստորև նշված միացությունները կամ աղտոտված են դրանցով՝		A4050	
անօրգանական ցիանիդներ՝ բացառությամբ պինդ թանկարժեք մետաղ (մետաղներ) կամ թանկարժեք մետաղի (մետաղների) միացություններ պարունակող թափոնների, որոնցում առկա են օրգանական ցիանիդների հետքեր	2837-ից 3825-ից		Y33
օրգանական ցիանիդներ	2926-ից 2929-ից 3825-ից		Y38
20. Թթվային և հիմնային լուծույթների թափոններ, որոնց հիմնական բաղադրիչը կազմում են հետևյալ նյութերը՝		A4090	Y34, Y35
աղաթթու $pH \leq 2$	2806 10 000 0-ից		
ծծմբական թթու, օլեում	2807 00-ից		
ազոտական թթու $pH \leq 2$	2808 00 000 0-ից		
ֆտորջրածնական թթու	2811 11 000 0-ից		
բրոմջրածնական թթու	2811 19 100 0-ից		
ամոնիակ՝ ջրային լուծույթում	2814 20 000 0-ից		
նատրիումի հիդրօքսիդ $pH \geq 11,5$	2815 12 000 0-ից		
կալիումի հիդրօքսիդ $pH \geq 11,5$	2815 20 000 0-ից		
21. Պղնձի արտադրության խարամ՝ բացառությամբ քիմիապես կայուն, երկաթի բարձր (20%-ից ավելի) պարունակությամբ և արդյունաբերական ստանդարտներին համապատասխան մշակված խարամի	2620 30 000 0-ից 2620 99 950 9-ից		
22. Ցինկի արտադրության խարամ՝ բացառությամբ քիմիապես կայուն, երկաթի բարձր (20%-ից ավելի) պարունակությամբ և	2620 11 000 0-ից 2620 19 000 0-ից 2620 99 950 9-ից	B1220	

արդյունաբերական ստանդարտներին համապատասխան մշակված խարամի			
23. Այլ խարամ և մոխիր՝ ներառյալ ծովային ջրիմուռներից մոխիրը (կելպ), այդ թվում՝	2620-ից 2621-ից 3825-ից		
կաթասների խարամներ			
պինդ, աղեր պարունակող մնացորդներ՝ ավանդական վառելիքով (առանց ռեակտիվ գիպսի) այրման ագրեգատների ծխակլանիչ սարքավորումներից			
թռչող մոխիր և փոշի՝ այրման սարքավորումներից՝ բացառությամբ թափոնների այրման սարքավորումների և պիրոլիզային սարքավորումների թռչող մոխրի և փոշու			
չեզոքացված կարմիր կավ՝ արգևահողի արտադրությունից			
ածխով աշխատող էներգասարքավորումների մոխիր (այդ թվում՝ թռչող)		A2060	
24. Օգտագործված ակտիվացված ածուխ՝ բացառությամբ խմելու ջրի մշակման, սննդի արդյունաբերության և վիտամինների արտադրության ժամանակ գոյացածների	3802-ից	A4160	
25. Ֆտորի անօրգանական միացություններ պարունակող թափոններ, հեղուկի կամ շլամի տեսքով՝ բացառությամբ կալցիումի ֆտորիդի շլամի	28-ից 3824-ից 3825-ից	A2020	Y32
26. Ռետինի թափոններ, կտորտանքներ և ջարդոն (բացի կոշտ ռետինից)	4004 00 000 0-ից	B3040 B3080	
27. Գինու նստվածք, զինեքար	2307 00	B3060	
28. Կաշվի արտադրության թափոններ՝ վեցավալենտ քրոմի միացություններ և բիոցիդներ պարունակող փոշու, մոխրի, շլամի տեսքով	3504 00-ից	A3090	Y21 Y4
29. Բնական կամ համակցված կաշվի կտորտանք և այլ թափոններ՝ կաշվե ապրանքների արտադրության համար ոչ պիտանի՝ վեցավալենտ քրոմի միացությունների և բիոցիդների պարունակությամբ	4115 10 000 0-ից 4115 20 000 0-ից	A3100	Y21 Y4
30. Մորթու կամ մուշտակեղենի հումքի թափոններ՝ վեցավալենտ քրոմի միացությունների կամ բիոցիդների պարունակությամբ	0511 99 100 0-ից 4101 - 4103-ից 4301-ից	A3110	Y21 Y4
31. Թափոններ՝ աղվամազի տեսքով՝ մանվածքային արտադրությունից	5003 00 000 0-ից 5103 20 000 0-ից 5202 10 000 0-ից 5505-ից 5601 30 000 0-ից	A3120	
32. Պիգմենտների,	3206-ից, 3208-ից	A4070	Y12

ներկանյութերի, ներկերի և լաքերի թափոններ, որոնք պարունակում են ծանր մետաղներ և (կամ) օրգանական լուծիչներ	3212-ից, 3825-ից		
33. Մետաղների և համաձուլվածքների թափոններ, որոնք պարունակում են ստորև նշված նյութերից ցանկացածը (բացառությամբ պատրաստի արտադրանքի տեսքով ջարդոնի և համաձուլվածքների՝ թիթեղ, խողովակներ և այլն)	2805 40-ից 7204-ից 7404 00-ից 7503 00-ից 7602 00-ից	A1010	
անտիմոն	7802 00 000 0-ից		Y27
կադմիում	7902 00 000 0-ից		Y26
սելեն	8002 00 000 0-ից		Y25
թելուր	8101 97 000 0-ից		Y28
թալիում	8102 97 000 0-ից 8103 30 000 0-ից 8104 20 000 0-ից 8105 30 000 0-ից 8106 00 100 0-ից 8107 30 000 0-ից 8108 30 000 0-ից 8109 30 000 0-ից 8110 20 000 0-ից 8111 00 190 0-ից 8112 13 000 0-ից 8112 22 000 0-ից 8112 52 000 0-ից 8112 92 210 9-ից 8113 00 400 0-ից		Y30
34. Թափոններ, որոնք որպես բաղադրիչ կամ աղտոտիչ, պարունակում են ստորև նշված նյութերից ցանկացածը՝ բացառությամբ կոշտ մետաղական թափոնների	2620 29 000 0-ից 2620 60 000 0-ից 2620 91 000 0-ից 2620 99 950 9-ից	A1020	
անտիմոն, անտիմոնի միացություններ			Y27
բերիլիում, բերիլիումի միացություններ			Y20
կադմիում, կադմիումի միացություններ			Y26
կապար, կապարի միացություններ			Y31
սելեն, սելենի միացություններ			Y25
տելուր, տելուրի միացություններ			Y28
թալիում, թալիումի միացություններ			Y30
35. Ցինկի վերամշակումից հետո ավալիացման մնացորդներ՝ փոշու, շլամի տեսքով (յարոզիտ, գեմատիտ և այլն)	2620 19 000 0-ից 2530 90 000 9-ից	A1070	
36. Մասնատված տեսքով բանեցված կապարաթթվային էլեկտրակուտակիչներ	7802 00 000 0-ից 8548 10 910 0-ից	A1160	Y31
37. Չտեսակավորված օգտագործված մարտկոցներ	8548 10 100 0-ից 8548 10 210 0-ից 8548 10 290 0-ից	A1170	
38. Էլեկտրասարքավորումների ջարդոն կամ	85-ից	A1180	Y29 Y26

Էլեկտրատեխնիկական հանգույցներ, որոնք պարունակում են գալվանական էլեմենտներ, մարտկոցներ, սնդիկային փոխարկիչներ, կատոդաճառագայթային խողովակների ապակի և ակտիվ ծածկ ունեցող այլ ապակի կամ կադմիումով, սնդիկով, կապարով, պոլիքլորացված բիֆենիլներով աղտոտված՝ 50 մգ/կգ և բարձր կոնցենտրացիայով			Y31
39. Բանեցված նավթամթերք, այդ թվում՝	2710-ից	A3020, A3040, A4060, A3180	Y8, Y9, Y10
Նավթամթերք՝ ջրային էմուլսիաների կամ ջրի հետ խառնուրդների տեսքով		A4060	Y9
Նավթամթերք՝ բաք-պահեստարանների ապարախյուսի (շլամ) տեսքով			
Նավթամթերք, ինչը որպես առաջնային արտադրանք պիտանի չէ հետագա օգտագործման համար		A3020, A3040	Y8
բանեցված նավթամթերք՝ պոլիքլորբիֆենիլներ (ՊԶԲ), պոլիքլորտերֆենիլներ (ՊԶՏ) կամ պոլիբրոմբիֆենիլներ (ՊԲԲ) պարունակող	2710 91 000 0	A3180	Y10
Պոլիքլորացված դիֆենիլներ (ՊԶԴ), պոլիքլորացված տերֆենիլներ (ՊԶՏ), պոլիքլորացված նաֆթալիններ (ՊԶՆ) կամ պոլիբրոմացված դիֆենիլներ (ՊԲԴ)՝ ներառյալ ցանկացած այլ պոլիբրոմացված 50 մգ/կգ և ավելի կոնցենտրացիա ունեցող համանման միացություններ պարունակող կամ դրանցով աղտոտված իրերի և նյութերի թափոններ	2710 91 000 0-ից	A3180	Y10

1. Սույն ցանկի կիրառման նպատակով անհրաժեշտ է ղեկավարվել ինչպես ԵՏՄ ԱՏԳ ԱԱ-ի ծածկագրով, այնպես էլ ապրանքի անվանումով (ֆիզիկական և քիմիական բնութագրերով):»:

**Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար**

**Դ. Հարությունյան**